**4.** ԽԿԿ-ի կամավորը՝ որպես միջնորդ / կամ ինքնառաջադրված անձը (ընդգծել)

______________________ հեռախոս ________
(Անուն - ազգանուն)

էլ. փոստի հասցեն ______________________

**5.** Դպրոցը ցանկություն է հայտնում ստանալու «Macintosh» համակարգիչ

Այո / Ոչ
(շրջագծել)

**6.** Որպես դպրոցի տնօրեն հաստատում եմ և պարտավորվում եմ բավարարել ԱՀՕ-ի կողմից նշված բոլոր պահանջները:

______________________ հեռախոս ________
(Տնօրենի անուն - ազգանունը)

______________________
(Ստորագրություն)

Կ. Տ

Եթե խնդրագրի այս ձևը օգտագործվում է որպես ինքնառաջադրման միջոց, ապա միանգամայն խրախուսվում է նրա ներկայացումը տեղի ԽԿԿ - ի միջոցով:

* էլ. փոստի հասցեի և ֆաքսի տրամադրումը անհրաժեշտ է այն պատճառով, որ կարող է մոտակայքում նշանակված ԽԿԿ չլինել՝ ԱՀՕ-ի հետ կապ հաստատելու համար: Խնդրագիր ներկայացրած դպրոցը նույնպես պետք է դնի իր կնիքը, նշի որևէ ֆաքսի համար, որի միջոցով կարելի է կապ պահպանել և ԱՀՕ-ից (անգլերեն լեզվով) ծանուցում ստանալ համակարգիչների երբ և որտեղ ստանալու վերաբերյալ: Ինքնառաջադրված դպրոցները պետք է համաձայնություն տան սարքավորումը Երևանի օդանավակայանում ստանալու մասին:

## ԱՀՕ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՏԱՐԱԾ ԾՐԱԳՐԵՐԸ

- 1995թ. օժանդակել է ԼաԳրանժի «Կերային մշակաբույսերով (հատիկային կերեր) զբաղվող փորձագիտական խորհրդին»՝ Թալինի շրջանի գյուղատնտեսական ընկերություններին (ԹՇԳԸ) հողի նվազագույն մշակման համար շարքացան առաքելու հարցում:
- 1996թ. աշխատել է ԹՇԳԸ-ի հետ՝ ցորենի նվազագույն մշակման հողերի ցուցադրական փորձադաշտեր հիմնելու նպատակով:
- ԼաԳրանժի Վենսոր հիվանդանոցից ուղարկել է օգտագործված հիվանդանոցային սարքավորումներ՝ Թալինի և Երևանի համապատասխան հիվանդանոցների համար:
- Ընդունում է նվիրաբերած համակարգիչներ, տպիչներ, ֆաքսեր, պատճենահանող սարքեր և այլ հաղորդակցության սարքավորումներ՝ Հայաստանի դպրոցներում և գյուղատնտեսական ընկերություններում օգտագործելու նպատակով:
- Համագործակցում է «Խաղաղության Կորպուսի» և USDA-ի կամավորների, Հայաստանի Ագրոգիտասփյուռի գործակալների և «CARE», «VOCA», «ATG», «SAVE» կազմակերպությունների հետ՝ էլեկտրոնային փոստի, հեռախոսի, ֆաքսի միջոցով՝ սարքավորումներ և ուսումնական աջակցություն ապահովելու նպատակով:
- Կապ է պահպանում ԱՄՆ-ի համալսարանների և գործարար շրջանների հետ՝ Հայաստանի նվաճումներին աջակցելու և նպաստելու նպատակով:
- Օժադակել է Լեյքլենդի FFA («Ամերիկայի ապագա գյուղատնտեսներ») ենթակումբին՝ այգիների գեղեցկացման նպատակով երկու հայկական համայնքներին գյուղատնտեսական գործիքներով ապահովելու հարցում:
- Երաշխավորել է Լա Գրանժի «Ռոտարի Ակումբ»-ին՝ Հաղպատի համայնքի և Թալինի մշակութային կենտրոնի բարելավման և զարգացման ծրագրերին աջակցման հարցում:
- Օժանդակել է Լա Գրանժի «Ռոտարի Ակումբ»-ին հովանավորելու Հայաստանի նորաստեղծ «Ռոտարի Ակումբ»-ի հետ առաջին համատեղ ծրագրին՝ վերանորոգելու «Մանկական քաղցկեղի բուժման կենտրոն»-ը:
- Ապահովել է համակարգիչներով ՀՀ առողջապահության նախարարության ենթակայության «Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների» Երևանյան բժշկական կենտրոնին՝ ի կատար ածելու կանանց վերարտադրողական առողջապահության հարցերի հետ առնչվող մի շարք ծրագրեր:
- Ապահովել է համակարգիչներով CDCS-ին («Քաղաքացիական հասարակության զարգացման կենտրոն»), որը համակարգչային դասընթացներ է կազմակերպում միջնակարգ կրթությամբ երիտասարդ կանանց համար, որոնք դպրոցը նոր են ավարտել և չեն ընդունվել բարձրագույն ուսումնական հաստատություններ կամ աշխատանք չունեն:
- Նպաստել է «Ռոտարի ակումբ»-ին «Ուղիղ աղիքի քաղցկեղի հայտնաբերման» ծրագրի իրականացման գործում, որը իրագործվել է ԼաԳրանժի և Երևանի «Ռոտարի ակումբ»-ների կողմից՝ հովանավորվելով «Ռոտարի միջազգային»– ի կողմից: Ծրագրի շրջանակներում ուսուցանվել են Երևանի 24 պոլիկլինիկաների աշխատակիցներ, որոնք իրականացրել են 55 տարեկանն անց քաղաքացիներց փորձանմուշներ վերցնելու ծրագիրը: Վերցվել են 18,000 փորձանմուշներ: Երկրորդական էնդոսկոպիկ փորձաքննություն է կատարվել նրանց համար, որոնց մոտ առկա են եղել առողջության խանգարման երևույթներ:
- Նվիրաբերված բանջարանոցային սերմեր են տրվել Գյումրիի «Մեղվիկ» որբանոցին, «Մանկական կրթական կենտրոնին» և նախկին ադրբեջանաբնակ վայրում ապրող փախստականներին:
- Ապահովել է բժշկական սարքավորումներով Բաղրամյանի հիվանդանոցը՝ վերջինիս խնրանքով:
- Օժանդակել է ԽԿ կամավոր Դայանա Գոմեզին Եղեգնաձորի բնակիչ մի տասնհինգամյա աղջկա բնածին արատի բուժման հարցում:

# «ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ» ԾՐԱԳԻՐ

ԱՄՆ-Ի ԻՆԴԻԱՆԱ ՆԱՀԱՆԳԻ ԼԱԳՐԱՆԺԻ «ԱՍՏԾՈ ՆԱԽՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ» ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ IN 46761

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՎԱՅՐԵՐԻ ԴՊՐՈՑՆԵՐԻՆ ՆՎԻՐԱԲԵՐՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԻՉՆԵՐ

*Հունիս 2003*

ԱՄՆ-ի Ինդիանա նահանգի Լա Գրանժի Աստծո նախնական եկեղեցու հոգևոր խորհրդի «Աջակցություն Հայաստանին» ծրագիրը նպատակ է հետապնդում դպրոցականների համար հնարավորություններ ստեղծել համակարգչների հետ աշխատել, նախնական հմտություններ ձեռք բերել՝ հետագա պատրաստվածության ապահովման նպատակով: ԱՀՕ-ն օգտագործած համակարգիչներ կառաքի Հայաստանի Հանրապետության գյուղական վայրերի միջնակարգ դպրոցներ՝ որպես նվիրատվություն ԱՄՆ-ի տարբեր ընկերություններից և անհատներից: Համակարգիչները (հիմնականում 486) նպատակահարմար են ծրագրավորում սովորեցնելու, ինչպես նաև տեքստեր հավաքելու, տվյալներ կառավարելու, ֆինանսական էլեկտրոնային աղյուսակներ, հայտարարություններ պատրաստելու համար: Նրանք ունեն հայկական տառատեսակներ՝ նախատեսված Հայաստանի դպրոցների երեխաների և մանկավարժական անձնակազմի օգտագործման համար: Որպես կանոն, մեկ (հազվադեպ՝ երկու) համակարգիչ է հատկացվում մեկ դպրոցին: (Հնարավոր է տրամադրել 3-5 Macintosh համակրգիչներ, եթե դպրոցը ցանկություն հայտնի):

Քանի որ Հայաստանում գործում է էկեկտրոնային փոստ (email), համակարգիչ ստացող դպրոցները խրախուսվում են դրամադրել էլեկտրոնային հասցե: Նույնպես ցանկալի է, որ խնդրագրի ձևը լրացվի անգլերենով, որպեսզի ԱՀՕ-ի ներկայացուցիչները հաղորդակցման դժվարությունների առաջ չկանգնեն:

## ՀԱՄԱԿԱՐԳԻՉՆԵՐ ՍՏԱՑՈՂ [illegible]

Պաշտոնապես դիմում ներկայացնի, հավաստիացնելով, որ դպրոցը համաձայն է.

- ապահովել համակարգիչների շահագործման համար անհրաժեշտ բոլոր սարքավորումները՝ տեղի պայմաններին հարմարեցնելու նպատակով (հոսանքափոխարկիչներ, հոսանքի ապահովում, կահույքը և դասարանի անվտանգություն),
- սարքավորումը պահել ապահով և անվտանգ տեղում,
- անհրաժեշտության դեպքում վերանորոգել սարքավորումը,
- հետաքրքրություն ցուցաբերող երեխաներին և ուսուցիչներին ապահովել համակարգիչներով,
- Համակարգչային հմտություններ ուսուցանելու նպատակով նշանակել ուսուցիչ և/կամ անհրաժեշտության դեպքում ապահովել վերջինիս վերապատրաստումը:
- Համակարգիչներն ստանալուց 6 և 18 ամիս անց կիրառման արդյունքների մասին զեկուցել Խաղաղության Կորպուսի կամավորներին (ԽԿԿ) և ԱՀՕ-ին:

***Նախազգուշացում.*** Քանի որ առավել նորագույն ծրագրերը ավելի մեծ օպերատիվ հիշողություն կամ դիսկի ծավալ են պահանջում, քան այս համակարգիչներն ունեն, ապա վերջիններիս տեղադրումը կարող է համակագիչների աշխատանքի դադարեցման առիթ հանդիսանալ կամ դրանք անգործունակ դարձնել: Եթե համակարգչի գործող համակարգերը փոփոխվել են կամ նոր ծրագրեր են տեղադրվել առանց ԱՀՕ-ի հետ գրավոր համաձայնության, ապա հետևանքների համար ԱՀՕ-ն պատասխանատվություն չի կրում:

**ԽԿ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ԵՆՔ ՀՐԱՎԻՐՈՒՄ ՀԵՏԵՎՅԱԼԻ ՎՐԱ. ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԸՆՁԵՌԵԼ ԱՋԱԿՑԵԼՈՒ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ԴՊՐՈՑՆԵՐԻՆ, ՈՐՈՆՔ «ՓՐՈՋԵՔԹ ՀԱՐՄՈՆԻ»-Ի ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ԿԱՄ ԱՅԼ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ ՉԵՆ ՍՏԱՑԵԼ:**

## ԽԿ ԿԱՄԱՎՈՐԻ (ՄԻՋՆՈՐԴ ԱՆՁԻ) ԴԵՐՆ Է`

- Գտնել այն դպրոցները, որոնք կարող են համապատասխան թեկնածու հանդիսանալ այս ծրագրի համար:
- Ապահովել տվյալ դպրոցի պատասխանատու անձանց (երկուսի` տնօրենի և համակարգչային գործ ուսուցանող ուսուցչի) կողմից խնդրագրի ձևակերպումը և այն ներկայացնել ԱՀԾ-ին (այն կարող է ուղարկվել էլ. փոստով, սակայն ակնկալվում է, որ ԽԿ կամավորները իրենք կստանան խնդրագիրը և իրենք էլ կներկայացնեն ԱՀԾ-ին):
- Կոորդինացնել թղթակցային աշխատանքները և սարքավորումների փոխադրման հետ կապված հարցերը:
- Երևանի օդանավակայանում ուղեբեռը ստացող ԽԿ կամավորը պետք է կապի միջոցներով այդ մասին տեղյակ պահի տարածաշրջանի ԽԿ այլ կամավորներին:
- Աջակցել ԱՀԾ-ին ծրագրի կատարման (խնդիրների առաջացում, լուծում, այլն) վերաբերյալ տեղեկատվության ապահովման հարցում և նպաստել ԱՀԾ-ի և դպրոցի միջև սերտ կապերի հաստատմանը:

Սարքավորումների առաքման հարցերը արդյունավետ կանոնակարգելու (բեռի առաքման հետ կապված ուշացման դեպքեր և այլն) և իրագործելու նպատակով` խնդրվում է, որ հունվարից հունիս ընկած ժամանակահատվածում ԽԿԿ-ի երկրորդ տարվա կամավորները ԱՀԾ-ին տեղեկացնեն նոր եկած` առաջին տարվա կամավորի(ների) անունը, հասցեն, հեռախոսի համարը և այլ կապի միջոցներ:



«.. ի նախապատրաստություն աստծո մարկանց սրբացման, ի պատրաստումն ծառայության գործերի, որպեսզի կառուցվի Քրիստոսի մարմինը` հավատացյալների միաբանությունը...» Եփեսացիս 4:12

ԱՀԾ-ի առաքելությունն է. որպես Աստծո կողմից սիրո համընդհանուր արտահայտություն` ամերիկյան վերջին տեխնիկական միջոցներից տրամադրել` ոգեշնչելու, խրախուսելու համատեղ ձեռներեցությունը, բարելավելու առողջապահության բնագավառը և ապահովելու համակարգչային տեխնիկայի ուսուցումը դպրոցներում:

ԱՄՆ-ի ԼաԳրանժի «Աստծո նախնական եկեղեցու» հոգևոր խորհրդի «Աջակցություն Հայաստանին» ծրագիրը (ԱՀԾ) կազմակերպվել է ԱՄՆ-ի Ինդիանա նահանգի ԼաԳրանժի օկրուգի Ագրոգիտասփյուռի նախկին գործակալ Դեյլ Ռեդինգի կողմից, որը 1994 թվականին աշխատել է Հայաստանում` ԱՄՆ-ի Գյուղ-Դեպարտամենտի ձեռնարկած Հայ-Ամերիկյան ծրագրի շրջանակներում:

ԱՀԾ-ն նպատակ է հետապնդում Հայաստանում աջակցել հայ ֆերմերների ընկերություններին, դպրոցներին, հիվանդանոցներին և «Ռոտարի ակումբ»-ի ծրագրերին, օգնել բարելավելու դպրոցները, հիվանդանոցները և համայնքների առողջապահական կառույցները ԱՄՆ-ից բերված սարքավորումներով և տեխնիկայով:

## «ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ» ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆ Է.

- Համակարգիչների ձեռք բերումը և պատշաճ վիճակով Հայաստանի դպրոցներին առաքումը (այն է` համակարգիչների պահեստավորումը, ստացված գույքի ցուցակագրումը և նվիրատուի համար գրանցումների վարումը, համակարգիչներում ծրագրերի տեղակայումը, դպրոցների ընտրությունը և դպրոցի հաջողությունների ապահովումը համակարգչային ուսուցման մեջ):
- Սարքավորումների առաքման հետ առնչվող հարցերի վերաբերյալ ԽԿԿ-ի հետ կապի պահպանումը և այլն:
- Համակարգիչների առաքումը Նյու-Յորքի «Հայկական Միացյալ Հիմնադրամ»-ի պահեստ` Հայաստան առաքելու նպատակով:
- Պետք է, որ այս ծրագրին առնչվող յուրաքանչյուր ոք հոգ տանի, որ համակարգիչներից օգտվողները լինեն միայն դպրոցի (ների) ուսուցիչներն ու աշակերտները:

Խնդրանքի կամ հարցերի առաջացման դեպքում կարող եք դիմել Դեյլ Ռեդինգին հետևյալ հասցեներով` 0440W 050N, LaGrange, IN 46761
Հեռախոս/Ֆաքս 219 463-7015 էլ. փոստի հասցեն է` dale@tln.net
http://www.tln.net/~dale01/ կամ դիմել կամավորական հիմունքներով գործող ԱՀԾ-ի երևանյան ներկայացուցիչ Ա. Սահակյանին` հեռ. 1-226.936

## Խնդրագիր դպրոցի կողմից ԿԱՄ Երաշխավորագիր Խաղաղության կորպուսի կամավորների կողմից

*ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ծրագիր*

Ուղարկել փոստով, ֆաքսով կամ էլեկտրոնային փոստով Դեյլ Ռեդինգին հետևյալ հասցեով`
0440W 050N LaGrange Indiana, 46761
Հեռախոս/ֆաքս (219) 463-7015
էլ.-փոստ dale@tln.net
http://www.tln.net/~dale01/

**(խնդրվում է լրացնել անգլերեն տպագիր տառերով)**

**1.** ________________մարզի ________________ գյուղի____________ դպրոցին երաշխավորվում է ստանալ համակարգիչ, որովհետև ____________________________________________ ______________________________________________:

**2.** ____________________________համաձայն է
Ուսուցչի անուն - ազգանունը
դպրոցի երեխաներին սովորեցնել օգտվել համակարգչից, քանի որ լինելով ________________տիրապետում է համակարգչին, **ծրագրավորմանը** և համակարգչային այլ հմտությունների: Սույն ձևի վրա վերջինիս ստորագրությունը հաստատում է համակարգչի ուսուցիչ աշխատելու մտադրությունը:

________________ հեռախոս ____________
(Ստորագրություն )

**3.** Տնօրենի, ուսուցչի կամ աշխատակազմից որևէ մեկի ֆաքսի համարը *________________, էլեկտրոնային փոստի հասցեն * ______________________________

____________________________________________
(անուն, ազգանուն)

(շարունակությունը` հաջորդ էջում)